նիցս անգամ զերծաւ նա 'ի ձեռաց Խաչակրաց, զի հաւատարիմք և մերձաւորք նորին ոգի 'ի բուին գուն գործեալ ազատեցին զնա 'ի գերութիւն անկանելոյ։ Զմտաւ ածեալ Սալահատտինի զյեղակարծուստ յարձակումն թշնամեաց և պաշարիլն իւր իբրեւ 'ի ծուղակի, ցիր և ցան փախուստ և ցրուումն այնքան զօրաց, կորուստ և յափշտակութիւն կահուց և կալմածոց մեծի բանակին, զկորակոր պարտութիւնն իւր առաջի թշնամեաց, եւ զյաղթանակ քրիստոնէից, պաշարեցաւ 'ի սուգ մեծ և անհնարին, և նստեալ յուղտ արագընթաց (հէճին) տխրաթախիծ ոգւով՝ տարեալ քաղցու և ծարաւոյ, մինչ քաղել ոգւոց նորա, հատեալ էանց զաւազուտ անապատն Թիէ, եւ զկնի 8 աւուրց եհաս 'ի քաղաքն Պլպէս։ Մեծ էր վտանգն յոր պաշարեցաւ Սալահատտին. զի որ զմեծամեծ գործս իւր իբրեւ զխաղս համարէր, զարմանայր 'ի վերայ անակնկալ ազատութեան իւրոյ, որպէս յիշէ 'ի նամակին զոր գրեաց առ Թուրան Շահ եղբայր իւր. «Քանիցս անգամ մատնեցաք 'ի կորուստ, այլ Աստուած չնորհեաց մեզ զկեանս, և այս եւս 'ի կատարումն կարեւոր գործոյ իմիք»։ Զայսմ պատերազմէ գրէ նաեւ Վարդան Պատմիչ. «Թագաւորն Երուսաղէմի 300 ձիաւորով եհար զՍալահատտին 'ի դրան Երուսաղէմի՝ զօրութեամբ Ս. Խաչին, որ եկեալ էր առնուլ զԵրուսաղէմ հարիւր քառասուն հազարաւ. բարձեալ ընդ ինքեան ջուր 60,000 ուղտիւք, որ միշտ կրէին 'ի գետոց և յաղբերաց»։ Ցերէ՝ 171։ Տէ՝ Նոր՝ 'ի Դէր՝ Մէր՝-յեան Ա՝՝ր՝-յ. Երէ՝ 483։ (1178)։

Թէպէտ եւ սուգ մեծ ունէր Սալահատտին 'ի վերայ պարտութեան իւրոյ, այլ չվհատեցաւ իսպառ. զի չեւ եւս բոլորեալ էր շրջան տարւոյն, վերստին գումարեաց զզօրս իւր՝ գնալ յօգնութիւն Իսլամացն Ասորեաց, և այնպիսի արագութեամբ էանց ընդ երկիրն քրիստոնէից, որք ոչ միայն խափանել կարացին զչու նորա, այլ չժամանեցին լսել եւս. եհաս երագութեամբ 'ի ստորոտս Լիբանան լերանց, եւ հասալ ճէպ տուեալ անտի զօրաց իւրոց՝ եգիտ զինքն 'ի Սիդոն (Սայտայ). եւ անկեալ 'ի վերայ բանակի թագաւորին Երուսաղէմի՝ կոտորեաց զրազումս, և զայլս ցիր եւ ցան արար փախստական. փոքու ի՛ն անկանէր